


Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանի կառուցման ընթացքում շինարարների կողեկտիվը մեծ աշխատանք է կատարել՝ սկզբնական շրջանում շինարարական հարթակի նախապատրաստման, իսկ հետագայում հիմնական կառուցվածքների գծով:

Ընթացիկ տարում հատկապես մեծ է հիմ-



Նկ. 6. Պատրաստի թունելի տեղամաս:

նական կառուցվածքների՝ թունելների, ջրանցքների, կայանի շենքի և մյուսների ծավալը:

Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանի հետ միաժամանակ կառուցվում է նաև Ախտայի շրջ-

կենտրոնից մինչև Սևանի շրջկենտրոնը տանող երկաթփերը՝ 23,8 կմ երկարությամբ, որը հնարավորություն կտա երևանի, Ախտայի և Սևանի միջև հաստատել երկաթուղային կապ: Ենարարական բանվորների համար կառուցվում են բարեկարգ բնակելի տներ (շահագործման է հանձնվել 9400 մ² բնակելի տարածություն), կենցաղային սպասարկման տներ, հիվանդանոցներ (50 մահճակալով), պոլիկլինիկայի, յոթնամյա դպրոցի շենքեր և այլն:

Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանում, որը պետք է շահագործման հանձնվի 1959 թ. վերջում, կատարվելու են աշխատանքների հիմնական տեսակների հետևյալ ժավալները:

Հողահանման աշխատանքներ	1550	հազ.	մ ³
Հողալցման աշխատանքներ	1180	"	"
Բետոնի և երկաթբետոնի աշխատանքներ	180	"	"
Մետաղի կոնստրուկցիաների և սարքավորման մոնտաժ	5110	տ	
Ավտոմատարձների կառուցում	30	կմ	
Երկաթքի կառուցում	23,8	»	

Մի տարուց հետո Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանը, միանալով Հայկական էներգոսիստեմի բարձրավոլտ ցանցին, բարելավելով Սևանա լճից բաց թողնվող ջրի օգտագործումը, լրացուցիչ էլեկտրաէներգիա կտա Հայկական ՍՍՌ աճող արդյունաբերությանը:

Արտադրության էկոնոմիկա և կազմակերպում

ՄԻՆՉԵՎ 100 ԿՎ.Տ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՄԲ ՍԻՆԻՐՈՆ ԳԵՆԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍԵՐԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԷՖԵԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՖՆԻՒԾ-ի սեկտորի պետ

Հին կոնստրուկցիայի մեքենաների փոխարինումը նոր կոնստրուկցիայի մեքենաներով հաղուանում է աշխատանքի արտադրողականության բարձրացման և արտադրանքի ինքնարժեքի

իշեցման անհրաժեշտ պայմանը արդյունաբերության այն ճյուղերում, որոնք կիրառում են այդ մեքենաները:

Այդ պատճառով անհրաժեշտ է հիմնավորել

Հին կոնստրուկցիայի մեքենայի լուրաքանչյուր փոխարինման նպատակահարմարությունը: Հարկավոր է նույնպես նշել, որ նոր կոնստրուկցիայի նպատակահարմարությունը հիմնավորելու ոչ բոլոր դեպքերում պետք է ենթալ միայն տվյալ կոնստրուկցիայի արտադրության և շահագործման ծախսերի մեծությունից, քանի որ նոր կոնստրուկցիան կարող է ունենալ մի շարք առավելություններ, որոնք չեն կարող անմիջապես հաշվի առնվել, ենթավոր ծախսերի մեծությունից:

Ներկայում էլեկտրատեխնիկական արդյունաբերության մեջ տնտեսական էֆեկտիվությունը որոշելիս ենում են նոր տեխնիկայի արմատավորման էֆեկտիվությունը որոշելու ժամանակավոր մեթոդիկայից:

Մեր կարծիքով, այդ մեթոդիկայի թերությունն այն է, որ նա չի պահանջում նոր մեքենայի կոնստրուկտիվ տեխնոլոգիական առանձնահատկությունների վերլուծությունը, ինչ մենք կաշխատենք ցույց տալ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում լայնորեն կիրառվող մինչև 100 կվտ կարողությամբ սինխրոն գեներատորների միասնական սերիայի օրինակով:

Վերջին տարիներում Վ. Ի. Լենինի անվան Հայկական էլեկտրամեքենաշինական գործարանում աշխատանքներ են տարվում ՍԳ տիպի հրացած գեներատորները ԵՄ տիպի միասնական սերիայի նոր գեներատորներով փոխարինելու համար: Գործարանն արդեն լուրացրել է միասնական սերիայի գեներատորների մի քանի տիպերի արտադրությունը՝ ԵՄ-92-6ս, ԵՄ-91-4ս, ԵՄ-83-6ս և այլն:

ԵՄ և ՍԳ տիպի սինխրոն գեներատորները կիրառվում են համարյունաբերական նշանակության ստացիոնար և շարժական տեղակայումներում որպես փոփոխական հոսանքի էլեկտրական էներգիայի աղբյուրներ:

Նշված տիպերի գեներատորների հիմնական տարրերությունը հանդիսանում է գրգռման սինհամայի սկզբունքը:

ԵՄ տիպի գեներատորները ինքնագրգռվում են ներկառուցված մեխանիկական համուլցիչից և ունեն կայունացնող հարմարանք, որն ապահովում է լարման ավտոմատիկ պահպանումը նորմինալ արժեքի $\pm 5\%$ սահմաններում:

ՍԳ տիպի գեներատորներում որպես գրգռիչ

կիրառվում է ներկառուցված հաստատուն հոսանքի չորսբևուանի շունտացին գեներատոր, իսկ լարումը կարգավորվում է ձեռքով, գրգռիչի շունտացին կարգավորիչի օգնությամբ:

ՍԳ տիպի գեներատորների լարման ավտոմատիկ կարգավորումը կարելի է իրագործել շալէլեկտրագործարանում մշակված հատուկ լարման ավտոմատիկ կարգավորիչի օգնությամբ (ԼԱԿ-1-ը՝ ՍԳ-35/6 գեներատորների և ԼԱԿ-2-ը՝ ՍԳ-60/6 գեներատորի համար):

Այդ պատճառով հին և նոր կոնստրուկցիայի գեներատորները ՍԳ տիպի գեներատորների հետ համեմատելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև համապատասխան լարման ավտոմատիկ կարգավորիչները:

Նոր և հին գեներատորների կոնստրուկցիաների տեխնոլոգիական վերլուծությունը ցույց է տալիս, որ միասնական տիպի գեներատորներն ունեն մի շարք առավելություններ: Մասնավորապես լեծ հետաքրքրություն են ներկայացնում դետալների նորմացման ու ստանդարտացման մասին եղած տվյալները:

Եթե ՍԳ և ԵՄ գեներատորների դետալների ընդհանուր քանակությունից հանենք ստատորային և ոռոտորային թերթերի, ոռոտորի սեղմենտների, ինչպես նաև միջադիրների և փորատային սեղերի քանակությունը, այսինքն՝ համեմատաբար քիչ աշխատատար և երկրորդական դետալները, որոնց գումարը ՍԳ-60/6 լեկ գեներատորի համար կազմում է 3800 հատ և ԵՄ-92-6ս լեկ գեներատորի համար՝ 3070 հատ, ապա զետալների մնացած քանակությունը բաշխվում է հետեւյալ ձևով (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Դետալների խմբի անվանումը	ՍԳ-60/6		ԵՄ-92-6ս	
	Քանակությունը	Ընդհանուր Քանակությունը	Քանակությունը	Ընդհանուր Քանակությունը
Հատուկ	429	56,2	249	49,8
Նորմացման համարյացման համար . . .	147	19,3	179	35,8
Ստանդարտացման համարյացման համար . . .	187	24,5	72	14,4
Ընդհանուր գանհակությունը . . .	763	100,0	500	100,0

Ինչպես երևում է աղյուսակ 1-ի տվյալներից, նոր կոնստրուկցիայի գեներատորում նորմալացված և ստանդարտացված դետալները համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեն ($50,2\%$, փոխանակ $43,8\%$):

Եթե քննարկենք դետալների բաշխումը այդ խմբերի համար, ըստ նրանց կշիռի (տե՛ս աղյուսակ 2), ապա կարելի է նկատել, որ նորմալացված և ստանդարտացված դետալները անհանուն տեսակարար կշիռ ունեն, այսինքն՝ հիմնականում նորմալացվել և ստանդարտացվել են մանր դետալները:

Աղյուսակ 2

Դետալների խմբի անվանումը	ՄԳ—60/6		ԵՍ—92—6ս	
	Աղյուսակ կազմով	Բնդիմական կազմով	Աղյուսակ կազմով	Բնդիմական կազմով
	ՀՀ կազմով	Բնդիմական կազմով	ՀՀ կազմով	Բնդիմական կազմով
Հատուկ	139,31	99,50	493,31	93,90
Նորմալացված . . .	1,23	0,24	2,22	0,41
Ստանդարտացված .	1,44	0,26	3,47	0,69
Բոլոր դետալների ընդհանուր կշիռը	612,00	100,0	502,0	100,0

Մոտավորապես նույնպիսի հարաբերակցություններ գոյություն ունեն նաև մյուս համեմարդկող մեքենաների համար ($ՄԳ—35/6$ և $ԵՍ—83—6ս$):

Այսպիսով, ըստ դետալների նորմալացման և ստանդարտացման աստիճանի՝ նոր կոնստրուկցիայի գեներատորները հներից մի քիչ ավելի էֆեկտիվ են:

Սակայն նոր կոնստրուկցիայի տնտեսական էֆեկտիվությունը որոշելիս, շահագործման ցու-

ցանիշների հավասարության դեպքում, վճռական է հանդիսանում արտադրության ծախսերի համարումը, այսինքն՝ նյութերի, արտադրական բանվորների աշխատավարձի, համացեխային և համագործարանային ծախսերի գումարը:

Էլեկտրամեքենաշինության մեջ արտադրանքի միավորի արտադրության ծախսերի գումարի, այսինքն՝ ինքնարժեքի մեջ, ամենամեծ տեսակարար կշիռ ունեն նյութական ծախսումները, այդ պատճառով նրանց կրճատումը կարևոր ժողովրդատեսական նշանակություն ունի:

Հիմնական նյութերի ծախսի հաշվարկը, Հայէլեկտրագործարանի նորմատիվ տվյալների համաձայն, նոր և հին կոնստրուկցիայի գեներատորների համար բերվում է աղյուսակ 3-ում:

Հիմնական նյութերի ծախսը քննարկելիս հարկավոր է նշել նրանց օգտագործման համեմատաբար ցածր գործակիցը, մասնավորապես հին կոնստրուկցիայի գեներատորների համար:

Ինչպես երևում է աղյուսակ 3-ի տվյալներից, չնայած ծախսվող հիմնական նյութերի կշիռ զգացի պակասեցման, նոր կոնստրուկցիայի գեներատորների համար ($ԵՍ—92—6ս$ գեներատորում $341,2$ կգ-ով, $ԵՍ—83—6ս$ գեներատորում $329,9$ կգ-ով և այլն) նոր կոնստրուկցիայի գեներատորների հիմնական նյութերի ծախսումների գումարը համեմատաբար բարձր է: Դա բացատրվում է նրանց մեջ բարձր որակի համեմատաբար թանկարժեք մեկուսիչ նյութերի կիրառությամբ:

Բայց այստեղ հարկավոր է հաշվի առնել, որ նոր կոնստրուկցիայի գեներատորները զգալիորեն ավելի հզոր են հներից, և, հետևաբար, նրանց արտադրության ծախսումների մեծությունների ուղղակի համեմատությունը չի կարող ճիշտ լինել:

Աղյուսակ 3

Նյութերի անվանումը	Հստ գեներատորների				Փոփոխություն		+ ավելացում - պակասեցում	
	ՄԳ—60/6		ԵՍ—92—6ս		Հստ կշիռի	Բաղարձակ կգ	Հստ արժեքի	Բացարձակ առուբ.
	Մհ կշիռը կգ	Գումարը առուբ.	Մհ կշիռը կգ	Գումարը առուբ.	Բաղարձակ կգ	%	Բացարձակ կգ	%
Սկ մետաղներ	1230,6	1301,2	873,6	979,2	-357,0	-29,0	322,0	-24,8
Գունավոր մետաղներ . . .	63,9	617,0	80,8	783,4	+11,9	+17,3	+166,4	+27,1
Մեկուսիչ նյութեր	8,7	235,6	15,8	612,7	+7,1	+81,7	+407,1	+172,8
Ալ նյութեր	13,1	274,9	9,8	132,8	-3,3	-25,2	-142,1	-51,7
Բնդամենք	1321,3	2428,7	980,0	2533,1	-341,3	-25,6	+109,4	+4,5

այդ պատճառով էլ ներքև բերվում են տեսակարար ծախսումները, այսինքն՝ գեներատորների կարողության 1 կվտ.-ին ընկնող ծախսումները:

Առանց գեներատորների կարողությունները հաշվի, առնելու, ինքնարժեքի համեմատության դեպքում ստացվում է, որ նոր կոնստրուկցիայի գեներատորների գործարանային ինքնարժեքը մի քիչ ավելի բարձր է հին կոնստրուկցիայի գեներատորների ինքնարժեքից:

Այդ պատճառով հին և նոր սիստեմների գեներատորների ինքնարժեքի համաձայն, չի կարելի դատել նոր կոնստրուկցիաների էֆեկտիվության աստիճանի մասին, քանի որ նոր կոնստրուկցիայի գեներատորները հներից տարբերվում են նոմինալ կարողությամբ: Ուստի տընտեսական էֆեկտիվությունը վերջնականապես պարզելու համար անհրաժեշտ է համադրել տեսակարար ցուցանիշները (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Ցուցանիշի անվանումը	Զարգացման միավոր	Հաստ գեներատորների		Փափոխություն + պահպանում - պակասում	
		ՄՊ-80/80	ԲՄ-92	Բարձրակարգություն	Ընդունակություն%
Նյութի տեսակարար դյուրաբեկությունը (ըստ մաքուր կրտության)	կգ/կվտ	16,58	11,91	-4,67	-28,2
Տեսակարար աշխատատարությունը	ն. ծ/կվտ	2,67	2,62	-0,05	-1,9
Տեսակարար ինքնարժեք	ռուբ/կվտ	76,2	69,8	-6,4	-8,4

Մոտավորապես նույնպիսի ցուցանիշներ են ստացվում նաև հին և նոր կոնստրուկցիայի մյուս գեներատորների համեմատության ժամանակ:

Թերված տվյալներից երեսում է, որ նոր կոնստրուկցիայի գեներատորներն ունեն համեմատաբար բարձր տեսակարար ցուցանիշներ: Այսպիսով, հին կոնստրուկցիաների գեներատորները նորերով վոխարինելիս, ժողովրդական տնտեսության մեջ, գեներատորային կարողության նույն պահանջի դեպքում, ստացվում է զգալի տնտեսական էֆեկտ:

Այդ պատճառով, եթե ելնելու լինենք Հայէկտրագործարանի 1958 թվականի արտադրական ծրագրից՝ մինչև 100 կվա գեներատորների թողարկման վերաբերյալ, ապա արտադրության ծախսումների տարեկան տնտեսումը հին գեներատորները միասնական սերիայի գեներատորներով վոխարինելու հետևանքով կկազմի մոտավորապես 3—3,5 մլն. ռուբլի:

Իսկ եթե հաշվի առնենք, որ նոր կոնստրուկցիայի գեներատորների դետալների նորմալացման և ստանդարտացման աստիճանը բարձրացնելու շնորհիվ (տե՛ս աղյուսակ 1 և 2) պակասում են գործիքների ու հարմարանքների, սարքավորման պահպանման և այլ ծախսումները, ապա տնտեսման ընդհանուր գումարը զգալիորեն ավելի բարձր կլինի:

Ներկայումս Հայէկտրագործարանի և նրա մեջին կոլեկտիվը աշխատում է միասնական սերիայի գեներատորների կոնստրուկցիայի հետագա կատարելագործման վրա:

ՀԱՅԷԿՏՐԱԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ ԱՐՏՎԴՐԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԾԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԻԶԵՑՆԵԼՈՒ ՓՈՐՁԻՑ

Գ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հայէկտրագործարանի ԳՀԽՖ տեխնիկա-սենտեսական հետազոտումների բաժնի պետ

Աշխատանքի արտադրողականությունը մի մեծություն է, որ հակադարձ համեմատական է արտադրության աշխատատարությանը, այսինքն՝ որքան արտադրանքի պատրաստման աշխատա-

տարությունը փոքր է, այնքան աշխատանքի արտադրողականությունը բարձր է:

Աշխատանքի արտադրողականության բարձրացման հիմնական ուղիներն են՝ տեխնիկական